հեղնում էր «Թան»-ը, քիչ տեղ չէր բռնում և Վիլսընեան ներշնչումը՝ ուղղակի կամ անուղղակի։

Նախագահ Վիլսընի նախաձեռնութեամբ, 1919թ. յուն. 30-ին Վեհաժողովը վճռեց ազատել Հայաստանը և նշանակել հոգատար (մանդատէր)։ Մարտ 20-ին դարձեալ Վիլսընի առաջարկութեամբ Վեհաժողովը որոշեց Մերձաւոր Արևելք ուղարկել Ամերիկայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի յանձնախումբ՝ քննելու համար օսմանեան կայսրութիւնից անջատելիք երկրամասերի վիճակը և ժողովուրդների կարիքները։ Փաստօրէն դնացին միայն Ամերիկայի ներկայացուցիչները՝ Քինդն ու Քրէյնը. միւս կառավարութիւնները ներկայացուցիչ չնշանակեցին։ Քինդն ու Քրէյնը հարցաքննութիւն կատարեցին Պոլսում յունիս 10-ից մինչև յուլ. 21 և եկան այն եզրակացութեան, որ նախկին օսմանեան կայսրութիւնից պէտք է կազմել 3 նոր պետութիւն՝ Հայաստան, Թիւրքիա և Պոլիս, որոնցից իւրաքանչիւրը առանձին-առանձին և բոլորը միասին պէտք է յանձնուեն մի պետութեան հոգատարութեան (մանդատ)։ Մասնաւորապէս դժուար էր երևում Հայաստանի հոգատարութիւնը, որի ստանձնումը պայմանաւորւում էր նրանով, որ Պոլիսն ու Թիւրքիան էլ դրուեն միևնոյն պետութեան հոգատարութեան տակ։ Իրենց տեղեկագրում Քինդն ու Քրէյնը առաջարկում էին, որ Հայաստանի, Թիւրքիայի և Պոլսի մանդատը տրուի Ամերիկային։

1919թ. ամառը նախագահ Վիլսընը նոր յանձնախումբ ուղարկեց Առաջաւոր Ասիա՝ քննելու համար մանդատի պայմանները։ Հմուտ մասնագէտների բազմամարդ մի առաքելութիւն էր այդ զօրավար Հարբորտի գլխաւորութեամբ։ Առաքելութիւնը իր քննական պտոյտը սկսեց Պոլսից, անցաւ Կիլիկիա, Հիւսիսային Սիւրիա, Տիգրանակերտ, Խարբերդ, Սըվազ, Երզնկա, Կարին, Կարս։ Ամէն տեղ հարցաքննեց ազգաբնակութեան ներկայացուցիչներին, յարաբերութեան մէջ մտաւ տեղական իշխանութիւնների հետ, հաւաքեց պատմական, ազգագրական, տնտեսական, քաղաքական, բնաշխարհագրական, մշակութային, ռազմագիտական և այլ կարգի տեղեկութիւններ։ Սըվազում զօր. Հարբորտը տեսակցութիւն ունեցաւ Մուստաֆա Քեմալի հետ, որը նոր էր ձեռնարկում «Միլլի» շարժման։ Հարբորտի ասելով՝ Քեմալը խնդրել է յայտնել Հայաստանի կառավարութեան, որ այս վերջինը ձեռք քաշէ մեծ պետութիւններից և անմիջապէս համաձայնութեան գայ Թիւրքերի հետ։

Հարբորտի առաքելութիւնը, Կարսից, Կաղզուան—Կողբ—Սուրմալուի ճանապարհով հասաւ Երևան և ջերմ ընդունելութիւն գտաւ կառավարութեան ու ժողովրդի կողմից։ Առաջուց արդէն ուղարկուած էին ընդարձակ հարցացուցակներ, և կառավարութիւնը պատրաստել էր պահանջած նիւթը։ Տեղի վրա էլ Հարբորտն ու իր ընկերները կատարեցին մանրակրկիտ քննութիւն և նոյն ջերմութեամբ ճանապարհ դրուեցին դէպի Թիֆլիս։ Այստեղից անցան Բագու և սեպտեմբերի վերջերին մեկնեցին Փարիզ, որտեղից զօր.